№ 201 Նոյեմբերի 17 (29) 1879 Նոյեմբերի 17 (29) № 201

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զեղած երևոյթ։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Բումինիա։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Հայ երիտասարդութիւնը։

ՁԵՂԱԾ ԵՐԵՒՈՅԹ

—

Հայերի դրութեան մէջ Ռուսաստանում կայ մի երևոյթ, որ մեր կարծիքով, առանձին առաջնորդող յօդուածի էր սպասում։

Հայերը Ռուսաստանում վաղուց է արդէն որ կարողացան յայտնվել իրանց ընդունակութիւններով, ձիրքերով և մինչև անգամ տաղանդներով ամեն տեսակ հասարակական գործունէութիւնների, պաշտօնական ամեն տեսակ ծառայութիւնների մէջ։ Ռուսաստանի հայերը նշանաւոր եղան որպէս դատաստանական պաշտօնեաներ, որպէս քաջ և ընդունակ զօրավարներ, որպէս բժիշկներ, նկարիչներ, պրոֆէսօրներ, վարժապետներ, պուբլիցիստներ, ֆինանսիստներ, ինժեներներ, տեխնիկներ և այլն, և այլն։

Բայց դեռ ոչ մի ռուսաստանցի հայը մինչև այժմ երբէք չէ ծառայել դիպլօմատիական ասպարիզի մէջ։ Արդեօք ընդունակութիւն չունի հայը դէպի այդ գործունէութիւնը, — չենք կարծում։ Աչքի առաջն ունելով հայի տաղանդները, պէտք է ենթադրենք որ և դիպլօմատիական ասպարիզի վրա հայը նոյնքան աջողութիւն կունենայ, որքան հասարակական ու պետական գործունէութեան և մնացած ճիւղերի մէջ։ Արդեօք հայի առջև փակված էր այն նշանաւոր հիմնարկութեան մուտքը, որ պատրաստում է դիպլօմատներին։ Մենք խօսում ենք արտաքին գործերի մինիստրութեանը ստորադրված Ս. Պետերբուրգի Արևելեան Ինստիտուտի մասին։ Մինչև այժմ ռուսահայերից ոչ մինը երբէք չէր ստացել ոչ դեսպանական, ոչ էլ մինչև անգամ հիւպատոսական պաշտօն։ Առաջին անգամն է որ մի հայ արժանանում է այդ տեսակ պաշտօնի, որպէս բացառութիւն. դա պ. Կ. Կամսարականն է, որին յանձնվեցաւ Վ. անի հիւպատոսի պաշտօնը։

Եթէ հայը կարող է լինել զօրապետ և ամենածանր պատերազմական բօպէներում կարող է կառավարել ամբողջ զօրաբաժինը, ի՞նչն նոյն հայը չէ կարող յոյս ունենալ, դիպլօմատիական հիմնաւոր կրթութիւն ստանալուց յետոյ, հասնել դիպլօմատիական նշանաւոր պաշտօնների։

Ռուսաստանի ոչ մի բարձրագոյն դպրոցի դռները երբէք փակված չեն եղել հայերի առջև, ուրեմն չենք կարծում որ Արևելեան Ինստիտուտի դռները բացառութեամբ մեր առջև փակված լինէին....

Վերջին ժամանակները ռուսաց մամուլի ամենանշանաւոր օրգանները սկսեցին այն միտքը յայտնել, որ այժմ, երբ Փոքր-Ասիայում և մանաւանդ Հայաստանում ռուսաց քաղաքական շահերը հանդիպում են Անգլիայի շահերին, անհրաժեշտ կը լինէր նշանակել այդ երկիրներում դիպլօմատիական ագէնտներ երկրի պէտքերին և լեզուին հմուտ անձինքներից, ուրեմն նոյն իսկ տեղացիներից, այսինքն հայերից։ Մենք վաղուց է որ այդ միտքը յայտնած էինք «Մշակի» մէջ և շատ ուրախ ենք որ մեր յայտնած միտքը այժմ արձագանք է գտնում մայրաքաղաքների ռուս լրագրութեան մէջ։

Կամսարականի Վ. անի մէջ ռուսաց հիւպատոս նշանակվելը ապացոյց է որ գործի վրա նոյն ինքն կառավարութեան հայեացքը ոչինչով չէ տարբերվում ռուս մամուլի կողմից այժմ ընդունած հայեացքից։

Այժմ, երբ հայերին սկսում են նշանակել ասիական թիւրքերը անբարոյական են և այլն։ Կան և ճշմարիտ աշխատասէր ուսանողներ, բայց դժբաղդաբար այսպիսիների թիւը այնքան փոքր է, որ պէտք է բացառութիւն համարել։ Դժուար է ճշդութեամբ որոշել, թէ մեր ժողովրդի ո՞ր դասակարգին են պատկանում լաւ ուսանողները։ Միայն մի երևոյթ, որ ճշմարիտ է, այն է, որ գիւղացիները գերազանցում են գաւառացիներից, գաւառացիները Թիֆլիսեցիներից, իսկ աղքատները՝ հարուստներից։ Ի՞նչից է այդ, արդեօք ընտանեկան կրթութիւնից, թէ առանձին ֆիզիօլօգիական պատճառներից, ես պարզապէս բացատրել չեմ կարող։ Բայց հասկանալի են պատճառները, թէ ինչու աղքատ երիտասարդները աւելի յաջողակ ուսանողներ են լինում քան թէ հարուստները։ Իսկ այն, որ գիւղացի և գաւառացի երիտասարդները մինչ գերազանցում են բուն Թիֆլիսեցիներից, ես այդ երևոյթին մի ուրիշ պատճառ չեմ գտնում, բացի նրանից, որ գաւառացիների և գիւղացիների ընտանեկան կրթութիւնը աւելի լաւ պայմաններով է կատարվում. նրանք երեխայութիւնից սովորում են աշխատութեան, և որ ամենագլխաւորն է, նրանք ունեն բարոյական հաստատուն հիմք, մինչդեռ Թիֆլիսեցի երիտասարդը հէնց ընտանիքից փչացած է դուրս գալիս թէ բարոյապէս և թէ մտաւորապէս։ Մի և նոյն կերպով կարելի է բացատրել և այն երևոյթը, որ Թիֆլիսեցի երիտասարդը Ռուսաստանի դպրոցներում բոլորովին օտարանում է, որովհետև հէնց սկզբից անունով միայն հայ էր, չէր սովորել իր մայրենի լեզուն, չէր կրում իր ազգի ցեղական առանձնութիւնները։ Բայց մի երեւանցի, մի ղարաբաղցի և մի լօռեցի երիտասարդը, որ կրթվել էր բուն հայկական ընտանիքում, որ գիտէր իր մայրենի լեզուն, երբէք չէ օտարանում, այլ ընդհակառակն, աւելի հաստատվում է իր ազգայնութեան մէջ։

Գաւառացի և գիւղացի ուսանողները լինում են կամ բոլորովին աղքատ, կամ փոքր միջոցներ ունեցող երիտասարդներ։ Անկարելի է նկարագրել, թէ որպիսի դժուարութիւնների դէմ պատերազմելով, աղքատ ուսանողը կարողանում է աւարտել իր ուսումը։ Նրա տոկունութիւնը, եռանդը, անձնազոհութիւնը հանում է կատարեալ նահատակութեան։ Երևակայեցէք կեանքի բոլոր տաժանութիւնը Մոսկվայի կամ Պետերբուրգի նման քաղաքներում, ուր փոքր ի շատէ համեստ ապրուստը պահանջում է ամսական գոնէ 30 ռուբլի, իսկ նա կառավարվում է 10 կամ 15 ռուբլիով։ Եւ այդ ողորմելի գումարը նա պիտի ձեռք բերէ անգին դժուարութիւններով։ Ես ճանաչում եմ մի քանի խեղճ ուսանողներ, որոնք ամառվայ արձակուրդների ժամանակ գալիս էին Թիֆլիս դասեր գտնելու, կամ պարապելու մի հարստի երեխաների հետ ամարանոցում, և այսպիսով փող էին վաստակում, և կրկին վերադառնում էին Մոսկվա կամ Պետերբուրգ շարունակելու իրանց ուսումը։ Եւ այսպիսիները լինում են ամենալաւ աւարտողները իրանց մասնագիտութիւնից։

Ցոյց տալով հայ ուսանողների թոյլ և զօրաւոր կողմերը, աւելորդ չէր լինի ասել մի քանի խօսք ևս նրանց ընդհանուր գաղափարների մասին։

Միանգամայն անարդար կը լինէր ասել, թէ բոլոր հայ ուսանողների ձգտումները միայն անձնական և նիւթական նպատակ ունեն, թէ նրանց մէջ չը կայնն բարի երիտասարդներ ազնիւ ցանկութիւններով։ Կան շատ ուսանողներ, որոնք յափշտակվում են եթէ ոչ ընդհանուր մարդասիրական գաղափարներով, գոնէ նեղ ազգասիրական բաղձանքներով։ Նրանք հաւաքվում են միասին, ծխում են, վիճում են և տնօրինում են իրանց «սիրելի ազգի» համար մի լաւ ապագայ։ Սկսում են սովորել հայոց լեզուն, ծանօթանալ նրա գրականութեան հետ և ուսումնասիրել նրա պէտքերը, և լի բարի ցանկութիւններով վերադառնում են իրանց հայրենիքը գործելու համար։ Մենք միւսանգամ կը տեսնվենք այդ պարոնների հետ կեանքի մէջ, թէ որ աստիճան նրանք հաւատարիմ են մնում իրանց ուխտին։ Այժմ վերջացնում եմ իմ նկարագիրը Մոսկվայի և Ս. Պետերբուրգի ուսանողների մասին, աւելացնելով մի քանի խօսք նրանց ժողովների վերաբերութեամբ։

Վաղուց է որ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի ու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

—

Աւելորդ չէր լինի համեմատութեան համար յիշել մի քանի գծեր ռուս ուսանողների մասին։

Ռուս ուսանողները, իրաւ է, նոյնպէս ծոյլ են, ընտրած մասնագիտութեանը չեն հետևում, վատ են սովորում, բայց նրանք ունեն մի առաւելութիւն, որից զուրկ են հայ ուսանողները։ Ռուս ուսանողները չատ կարդում են, եթէ ոչ գիտական գրքեր, գոնէ տենդենցիայով գրված բոմաններ, կրիտիկներ, փիլիսոփայութիւններ, հետևում են ժամանակակից մտքերի և շարժումների, և հետաքրքրվում են ժողովրդի ստոր դասի վիճակով, զբաղվում են քաղաքական մտքերով։ Կայ և մի ուրիշ բան, որ ռուս ուսանողների գլխաւոր յատկանիշն է, և որով որոշվում են նրանք եւրոպական բոլոր ուսանողներից, այն է, որ ռուս ուսանողը խիստ բարձր կարծիք ունի կնոջ վրա։ Նա կնոջ մէջ տեսնում է մի զօրութիւն, որ մեծ դեր պիտի խաղայ ժողովուրդների քաղաքակրթութեան մէջ, և ամեն ջանքով աշխատում է մշակել, զարգացնել այդ զօրութիւնը։ Այս պատճառով նա ոչ միայն մեծ նշանակութիւն է տալիս կնոջ դաստիարակութեանը, այլ ինքը ընտանիքների մէջ մտնելով, միսսիօնարի եռանդով աշխատում է անձնապէս ազդել, ներդործել կնոջ վրա, զարգացնել նրա միտքը և ծանօթացնել ժամանակի ոգու հետ։ Այս է պատճառը, որ նա իրան հեռու չէ պահում ընտանիքներից։ Տեսնում է.ք մի ուսանող որ և իցէ ընտանիքի մէջ ծանօթանում է մի մանկահասակ աղջկայ հետ, հէնց որ նկատեց նրա մէջ ընդունակութեան մի նշոյլ, իսկոյն կը սկսէ ինքնակոչ վարժապետի դեր կատարել։ Նա այնքան չատ կարդացել է, այնքան բաղմակողմանի հմտութիւններ ունի, որ աղջիկը երբէք նրանից չի ձանձրանայ։ Ազդեցութիւնը սկսվում է անզգալի կերպով։ Ուսանողը վաղ կը տայ այս և այն գրատունը, կը բերէ նրա համար նոր գրքեր. ցոյց կը տայ, թէ այս ինչ ամսագրի մէջ մի հետաքրքիր յօդուած է տպված, որ արժէր կարդալ. չատ անգամ ինքը կը նստէ, կը կարդայ նրա համար, կը բացատրէ, կը վիճէ նրա հետ, վերջապէս այնքան կաշխատէ, մինչև աղջկայ միտքը բոլորովին կը դարձնէ ուսումնասիրութեան վրա։ Եթէ աղջիկը միջոցներ չունէր, նա իր վերջին կօպէկները կը զոհէ նրա համար զանազան ուսումնական պարագայք գնելով, և չի խնայի ոչ ժամանակ և ոչ աշխատութիւն նրան զարգացնելու համար։ Պատահում է, որ աղջիկը բոլորովին անբախտանում է ուսանողի ազդեցութեան տակ, այսուամենայնիւ, նրանից պատրաստվում է մի էակ, որ հակառակ է ընթանում հասարակական նախապաշարմունքների դէմ։ Ուսանողների ազդեցութիւնն է պատճառ, որ այժմ բազմաթիւ ռուս աղջիկներ եւրօպական զանազան ուսումնական հիմնարկութիւնների մէջ դասախօսութիւններ են լսում։

Բայց հայ ուսանողը կնոջ վրա բոլորովին ասիական կէտից է նայում։ Ապրելով իր հայրենակիցների նեղ շրջանում, և ուրիշ խումբերի մէջ չը մտնելով, նա գոնէ չէ սառնում այն արտաքին փայլը, որ տալիս է մարդուն մեծ աշխարհի քաղաքակրթութիւնը։ Դրսից նա երևում է իր կոպտութեամբ և անշնորք դանդաղկոտութեամբ, իսկ ներսից՝ խորին դատարկութեամբ։ Նա այնքան սակաւ է կարդացել, այնքան սակաւ ծանօթ է, թէ ինչ է կատարվում իր շուրջը, որ անընդունակ է վարել որ և իցէ լուրջ և բաղդրեալ վիճաբանութիւն։ Մի քանի սերտած և «մօդնի» ֆրազներից յետոյ նրա գիտութեան պաշարը սպառվում է և սկսում է դուրս տալ ծիծաղելի յիմարութիւններ։

Ես նկարագրեցի Ռուսաստանի հայ ուսանողներին, բոլորովին նրանց մթին կողմերը վեր առնելով, բայց անարդարութիւն կը լինէր ասել, թէ բոլորը ծոյլ են, բոլորը ոչինչ չեն սովորում, բոլորը անբարոյական են և այլն։ Կան և ճշմարիտ աշխատասէր ուսանողներ, բայց դժբաղդաբար այսպիսիների թիւը այնքան փոքր է, որ պէտք է բացառութիւն համարել։ Դժուար է ճշդութեամբ որոշել, թէ մեր ժողովրդի ո՞ր դասակարգին են պատկանում լաւ ուսանողները։ Միայն մի երևոյթ, որ ճշմարիտ է, այն է, որ գիւղացիները գերազանցում են գաւառացիներից, գաւառացիները Թիֆլիսեցիներից, իսկ աղքատները՝ հարուստներից։ Ի՞նչից է այդ, արդեօք ընտանեկան կրթութիւնից, թէ առանձին ֆիզիօլօգիական պատճառներից, ես պարզապէս բացատրել չեմ կարող։ Բայց հասկանալի են պատճառները, թէ ինչու աղքատ երիտասարդները աւելի յաջողակ ուսանողներ են լինում քան թէ հարուստները։ Իսկ այն, որ գիւղացի և գաւառացի երիտասարդները մինչ գերազանցում են բուն Թիֆլիսեցիներից, ես այդ երևոյթին մի ուրիշ պատճառ չեմ գտնում, բացի նրանից, որ գաւառացիների և գիւղացիների ընտանեկան կրթութիւնը աւելի լաւ պայմաններով է կատարվում. նրանք երեխայութիւնից սովորում են աշխատութեան, և որ ամենագլխաւորն է, նրանք ունեն բարոյական հաստատուն հիմք, մինչդեռ Թիֆլիսեցի երիտասարդը հէնց ընտանիքից փչացած է դուրս գալիս թէ բարոյապէս և թէ մտաւորապէս։ Մի և նոյն կերպով կարելի է բացատրել և այն երևոյթը, որ Թիֆլիսեցի երիտասարդը Ռուսաստանի դպրոցներում բոլորովին օտարանում է, որովհետև հէնց սկզբից անունով միայն հայ էր, չէր սովորել իր մայրենի լեզուն, չէր կրում իր ազգի ցեղական առանձնութիւնները։ Բայց մի երեւանցի, մի ղարաբաղցի և մի լօռեցի երիտասարդը, որ կրթվել էր բուն հայկական ընտանիքում, որ գիտէր իր մայրենի լեզուն, երբէք չէ օտարանում, այլ ընդհակառակն, աւելի հաստատվում է իր ազգայնութեան մէջ։

Գաւառացի և գիւղացի ուսանողները լինում են կամ բոլորովին աղքատ, կամ փոքր միջոցներ ունեցող երիտասարդներ։ Անկարելի է նկարագրել, թէ որպիսի դժուարութիւնների դէմ պատերազմելով, աղքատ ուսանողը կարողանում է աւար-

քիայի դիպլոմատիական պաշտօնների վրա, թող ներվի մեզ յուսալ որ Ս. Պետերբուրգի Արևելեան Ինստիտուտը տարուց տարի աւելի և աւելի յաճախված կը լինի հայ ուսանողներով։

Զը մոռանանք որ Փոքր-Ասիայում և Հայաստանում մեր դիպլոմատիան պէտք է մրցի անգլիացիների պէս ճարպիկ և մինչև անգամ նենգաւոր դիպլոմատիական ագենտների հետ։ Իսկ ռուսաց դիպլոմատիային անգլիացիների հետ Հայաստանում կատարելապէս մրցելու համար ամենաձեռնտու միջոց կը լինէր նշանակել հայերին Հայաստանի բոլոր հիւպատոսների և փոխ-հիւպատոսների պաշտօնների վրա։

Նախ՝ հայը ամենից լաւ կարող է գործել Հայաստանում, որովհետև ոչ ոք, ի հարկէ, այնքան լաւ չէ կարող ծանօթ լինել Հայաստանի թէ բուն հայոց և թէ այդ երկրի այլ ազգերի ժողովրդական կեանքի, նրանց բարք ու վարքերի, նրանց կենսական պահանջների ու Հայաստանի տեղական լեզուների հետ։ Երկրորդ՝—թող հայի վերաբերութեամբ այդ ընդունվի որպէս գովասանք, կամ որպէս պարսաւանք,—բայց մենք խոր կերպով համոզված ենք, որ եթէ ռուսաց դիպլոմատիան կամենար, թէ յօգուտ իրան և թէ յօգուտ հայոց ազգի, աջողութեամբ գործել անգլիական դիպլոմատիայի դէմ Հայաստանում,—նա այդ կարող էր անել միմիայն հայ ագէնտների օգնութեամբ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

28 հոկտեմբերի

Բաղդախնդիր այցելու, երբ հանդամանքները կուզեն գնացդ դէպի Ալէքսանդրապօլ և դուք երբ կը մօտենաք մեր քաղաքին, հաւաքեցէք ձեր բոլոր մտաւորական և բարոյական զօրութիւնը և մի առանձին պատկառանքով ու ակնածութեամբ մտէք այս քաղաքը. որովհետև դուք մտնում էք հանճարի քաղաքը, որովհետև այստեղ ծփում է խելք, ընդունակութիւն և տաղանդ։ Հանճար և հայ, հայ և հանճար,—սա մի ակսիօմա է մեր քաղաքի «պամպուլիկների» համար։ Մեր հասարակութիւնը արդէն հասել է մտաւոր զարգացման և քաղաքակրթութեան ամենաբարձր աստիճանին. մեզանում ամենայն մի հասարակական հիմնարկութիւն արդէն ստացել է իր հիմնաւոր յառաջադիմական ձեր։ Մենք ունենք հասարակական ազնիւ գործողներ՝ գործունեայ քաղաքագլուխներ, անչահասէր երէցփոխներ, պարտականութիւն ճանաչող հոգաբարձուք, բարոյագէտ և աստուածաբան քահանաներ, անսխալական մանկավարժներ, հրապարակախօս գիշերաշրջիկներ, անկողմնապահ թղթակիցներ, վերջապէս մենք ունենք ամենը առանց թերութեան։ Վայ քու հալիդ, թէ դու մի անտաղանդ և անհանճար մարդ համարձակեցար ոտք դնել այս ընդունակութեան որջի մէջ։ Ինչ մտադրութիւն ուզում ես ունեցիր, ինչ գործ կամ պաշտօն վարելու նպատակ կամիս ունեցիր, բայց եթէ դու չունես տաղանդ, չունես ընդունակութիւն, ընդունակութիւն ալէքսանդրապօլցու բուն հասկացողութեամբ,—ամենայն գործ, զբաղմունք, պաշտօն կը չքանան քեզ համար։

Պարզենք մեր խօսքը՝ ընդունելով մի որոշ ուղղութիւն, մի որոշ դիրք։

Դիցուք թէ դուք մտադիր էք մնել մեզանում քահանայ և կամենում էք անշուշտ իրագործել այս նպատակը։ Քահանայութեան արժանաւորութիւն ունիս կամ չէ,—սա մի կողմնակի հարց է։ Հայկական գրագիտութեան և ընթերցանութեան մի թերի սկզբնական նախագիտելիք կարող է բաւականութիւն տալ այս հարցին։ Ո՛չ այս պաշտօնին համապատասխան կրթութիւն և ոչ էլ արժանաւորութիւն պահանջել գիտենք մենք։ Այստեղ միայն անհրաժեշտ է գործ դնել այն միջոցները, որոնցով ձեռք են բերում մեզանում քահանայական պաշտօն։ Իբրև քահանայացու հէնց սկզբից երեսդ մի լաւ պնդացրած և մի ստորագրութեան թերթ ձեռքումդ բռնած կը շրջես փողոցէ փողոց, տնէ տուն և կրպակէ կրպակ ու թերթը կը ներկայացնես սրան և նրան ստորագրելու։ «Ես ինչու գիշամարդ լինիմ» կասէ մէկը ու կը ստորագրէ։—Ես ինչու խեղճի բաղդին քար քցեմ։—Կասէ միւսը ու նոյնպէս կը ստորագրէ։ «Իմ չը ստորագրելովս մթթէ կապացուցուի սրա անարժանութիւնը» կը մտածէ երրորդը և դարձեալ կը ստորագրէ։ Եւ այսպէս թէ ծանօթ, թէ անծանօթ բոլորը կը հաստատեն, որ դուք քահանայութեան արժանաւոր անձնաւորութիւն էք թէ կրթութեամբ, թէ վարքով և թէ բարքով. թէև լինէիք վերջին ագէտը կամ առաջին անբարոյականը։ Երբ արդէն պատրաստ կը լինի այս ժողովրդական դիպլոմը, կը միացնէք նրան և երեք հատ շղկշղկան հարիւրանոց, կը ներկայացնէք քահանայական պաշտօն շնորհող կապալառուին.... և արդէն դուք հասած կը լինէք ձեր նպատակին։ Այնուհետև կը սկսէք վարել այդ ազնիւ և ծանր պաշտօնը ամենայն ճշդութեամբ։ Ամուսնացողներին կը պսակէք, ծընածներ կը մկրտէք, ննջեցեալներին կը թաղէք, անուշ կանէք քէլեխի հացը, կը ստանաք օրէնսդրական կողոպուտը, կը քարոզէք այնուհետև շուտ ամուսնութեան անհրաժեշտութիւնը, ուսումնարանների վատ ազդեցութիւնը, ուսումնականների մոլորութիւնը, ազգասիրութեան տուտուցութիւնը, այս աշխարհի ունայնութիւնը,—վերջապէս ձեր բոլոր գործունէութիւնը սահմանափակելով այսպիսի նեղ, միայն անձնական շահերին համապատասխանող, հակա-քրիստոնէական համոզմունքների շրջանակով, կապրէք միշտ հանգիստ միայն ապրելու համար։

Եթէ ուզում էք լինել վաճառական, աշխատեցէք նմանել մեր վաճառականներին։ Այստեղ չը մի տեսակ քրմական ֆանատիկոսութիւն, մի տեսակ կոյր յամառութիւն տիրում է նրանց ամբողջ մտաւոր կարողութեան վրա։ Նրանք փոքր ի շատէ կարդացել են և առանց համոզմունքի մարդիկ չեն, բայց իրանց համոզմունքների մէջ այն աստիճան կամակոր են, որ դա պահում է նրանց միշտ քարացած անշարժութեան մէջ։ Այդ պատճառով զարմանալի չէ տեսնել, որ Դօրպատից աւարտողները մեր ազգային, հասարակական և եկեղեցական խնդիրների վերաբերութեամբ համարեա բոլորն էլ պահպանողականներ են։ Ինչ որ աւելի աչքի է զարկում, այդ է նրանց թթու ազգասիրութիւնը, որ չեն թագցնում երևան հանել, երբ այդ ցուցամոլութիւնը չէր պահանջում նրանցից որ և իցէ աշխատութիւն կամ զոհ։

Դառնում եմ դէպի արտասահմանեան ուսանողները։

Ռուսաստանի սահմաններից դուրս հայ ուսանողները դիմում են մեծ մասամբ Գերմանիա, իսկ մասնաւորապէս Ֆրանսիա և Զվիցերիա։ Սկսենք Գերմանիայից։

Հայ ուսանողը դիմում է Գերմանիայի այս և այն համալսարանական քաղաքը առանց մի բառ գերմաներէն գիտենալու։ Նա վարձում է մի ընտանիքի մէջ ընակութիւն, ուր վեց ամսից յետոյ սովորում է եթէ ոչ վարժ խօսել, բայց հասկանում է լսածը։ Տարին չը լրացած, նա համարձակ կարող է յաճախել իր ընտրած մասնագիտութիւնից դասախօսութիւններ լսելու։ Սկզբից քննութիւն տալ չէ պահանջվում, բաւական է, որ ուսանողը յայտնում է համալսարանի վարչութեանը իր ցանկութիւնը մտնել ուսանողների թւում, յետոյ նրա անունը գրվում է վարչութեան դրքի մէջ (матрикулярная книга)։ Գերմանական համալսարանը ազատ հիմնարկութիւն է. նրա կազմակերպութեան մէջ չեն տիրում այն պաշտօնական խիստ ձևերը, որ կարելի է բացատրել բառով արքունականութիւն (казенщина)։ Ուսանողին տուած է կատարեալ ազատութիւն թէ առարկայի և թէ պրոֆէսօրի ընտրութեան մէջ. նշանակված կուրսեր և քննութիւններ չը կան. ուսանողը ինքն է տնօրինում իր ժամանակը, որի ընթացքում նա մտադիր է սովորել։ Եթէ հանգամանքները չեն ներում, նա կարող է ընդհատել իր ուսումը և ամիսներից կամ տարիներից յետոյ կրկին շարունակել։ Շատ անգամ մի և նոյն ուսանողը իր ընտրած առարկայից լսում է զանազան պրոֆէսօրների մօտ, զանազան քաղաքներում. այստեղից առաջ է գալիս ուսանողների գաղթականութիւնը մի համալսարանական քաղաքից դէպի միւսը,—Բերլին, Լայպցիգ, Մինխէն, Հայդելբերգ, Խենա և այլն։ Այդ նպաստում է ուսանողին ծանօթանալ զանազան գիտնականների հայացքների հետ իր ընտրած առարկայի վերաբերութեամբ։ Լսելով զանազան պրոֆէսօրներին, զանազան համալսարաններում, ուսանողը կարող է վերջապէս ընտրել մէկը և այն համալսարանում քննութիւն տալ. այդ մասին արգելք չը կայ, բաւական է, որ նա ցոյց տար իր թղթերը, թէ այս ինչ պրոֆէսօրների մօտ այսքան ժամանակ լսել է։ Շատ անգամ պատահում է, որ մի ուսանող բացի իր ընտրած մասնագիտութիւնից, լսում է և մի քանի ուրիշ առարկաներ. պատմաբանը կամ ֆիլօլոգը մի և նոյն ժամանակ յաճախում է լսել մի նշանաւոր նատուրալիստին, կամ նատուրալիստը գնում է լսելու մի երևելի փիլիսոփային։ Եւ այսպէս, ամեն մի լսող կարող է ազատ կերպով ուսումնասիրել իր ընտրած արհեստի բոլոր յայտնի աւտօրիտետներին։

Պրոֆէսօրի յարաբերութիւնները ուսանողի հետ ընտանեկան բնաւորութիւն ունեն։ Նա չէ վարվում որպէս մի զօրապետ իր սօլդաթների հետ։ Նրա տունը մատչելի է ամեն մի ուսանողին, որ դիմում էր նրա մօտ որ և իցէ խորհուրդի համար։ Այս է պատճառը, որ գերմանական պրոֆէսօրը, գերմանական համալսարանը չէ վախեցնում ուսանողներին. և ոչ մի ազգի մէջ պրոֆէսօրը այնքան յարգված և այնքան սիրված չէ իր լսողներից, որպէս Գերմանիայում։ Նկատված է, որ պրոֆէսօրները աւելի մեծ ուշադրութիւն դարձնում են օտարազգի ուսանողներին, քան թէ բուն գերմանացի ուսանողների վրա, որոնք գիտեն իրանց դրածը և շատ կարօտ չեն նրանց խնամատարութեանը։

Համալսարանական պարապմունքները լինում են գլխաւորապէս՝ դասախօսութիւններ, որ լսում են ուսանողները, վճարելով մի նշանակված վարձ իրանց պրոֆէսօրին, այլ և մասնաւոր հետազօտութիւններ և փորձեր լաբօրատորիաներում պրոֆէսօրի ղեկավարութեամբ, և վերջապէս սեմինարիաներ, որ կատարվում են ուսանողների վարժութեան համար։ Սեմինարիաները որոշվում են նրանով, որ պրոֆէսօրը տալիս է իր լսողներին մի հարց նրանց մասնագիտութեան վերաբերութեամբ մշակելու համար, ուսանողները պատրաստում են և նրանցից մէկը բարձրանում է ամբիոնի վրա և խօսում է։ Պրոֆէսօրը այդ միջոցին նստած է լինում միւս ուսանողների շարքում, լսում է և նշանակում է իր նկատողութիւնները. մի և նոյնը անում են և միւս ուսանողները։ Յետոյ իւրաքանչիւրը իր կողմից հարցեր է առաջարկում և ամենքին պէտք է պատասխանէ դասախօսը։

Գերմանական համալսարաններում ամեն ինչ առաջնորդում է ուսանողին դէպի արհեստի և գիտութեան խորին ուսումնասիրութիւնը։ Զը մոռանանք պրոֆէսօրի զանազան զբօսանքները և քննական հետազօտութիւնները (экскурсія) իր լսողների հետ։ Ուսանողը յոյս չէ դնում պրոֆէսօրի լիտոգրաֆիական տետրակների վրա, որպէս լինում է այդ Ռուսաստանում, որ նա ամբողջ տարին անգործ մնայ, և յետոյ չտապով թուղթակի նման սերտէ քննութեան համար, և այնուհետև շուտով մոռանայ։ Ամեն մի ուսանող զգում է գիտութեան սաստիկ պահանջը, և նրա բոլոր շրջապատը, ուր չես գտնի մի անգործ մարդ, հարկադրում է նրան աշխատել և անդադար աշխատել։ Առանց գիտութեան դժուար է ապրել այնտեղ, ուր իւրաքանչիւր ոք ունի մի նշանաւոր պաշար գիտութեան. մրցութիւնը սաստիկ է։

(Կը շարունակվի)

---

*) Մինչև այսօր մենք չունենք որ և իցէ զբուռածք հայ ուսանողների մասին, բացի դոք. Կ. Արծրունիի «Այնտեղ և այստեղ» վէպիկը, որ մի գեղեցիկ պատկեր է Ռուսաստանի ուսանողների կեանքից։ Այս աշխատութիւնը տպվեցաւ «Մշակի» մէջ և թարգմանվեցաւ ռուսաց լեզուով։

քան սակաւաթիւ են, որ անհետանում են մեծամասնութեան շարքում։ Եթէ կամենում ես, որ մեր վաճառականները քեզ չնորհեն «ձկնկուլ», «զարաչուխալի», «քեասիպքեար» տիտղոսները մի լինիր բացառութիւն կազմողներից մէկը, այլ հետեիր մեծամասնութեան հոսանքին։

Եթէ կամք ունես վարել մեզանում թղթակցի պաշտօն,—քո գործունէութեան առաջին և վերջին պայմանը, մեր հասարակութեան ոչ մի պակասութիւնը, լրագրութեան միջոցաւ, նրա երեսին չը խփելը պէտք է լինի. այս միակ միջոցն է նրա համակրութիւնը գրաւելու համար,—որպէս անընդհատ փայփայանքներից և կամակատարութիւնից բարքով փչացած, կապրիզ երեխային հաճոյանալու միակ միջոցն է՝ իր պահանջածը կատարել միայն։ Օր. փոխանակ գրելու՝ թէ այս և այն գանձապահ հոգաբարձուն կամ երէցփոխը ուսումնարանապատկան կամ եկեղեցապատկան փողերը երկար միջոց մօտը պահեց անտօկոս կամ «կերաւ»—պէտք է գրել՝ կեցցէ այս կամ այն աղէն, որ ձանձրութիւն կրեց հասարակական փողերը մօտը պահելու այսքան միջոց առանց տօկոսի. կամ թէ երէցփոխ Ա. Ն. Բրը կերաւ եկեղեցու փողերը,—հասարակութիւնը հաչիւ չը պահանջեց, դրա համար նա էլ չը տուեց։ Բոլորովի՞ անխոհեմութիւն է գրել՝ թէ մեզանում հոգաբարձուք միայն ձեւի համար են հոգաբարձու, որ նրանք առանց խղճի և պարտաճանաչութեան զգացմունքի դէմ կարմրելու, հրատարակում են լրագրութեան միջոցաւ, թէ չաթթը մի անգամ չարունակ նիստ են կայացնում, այն ինչ նրանցից շատերը ամիսներով չեն տեսնում ու սումնարանի երեսը, որ այս տարվայ մեր հոգևորդպրոցի ճգնաժամի ժամանակ անգամ այս կամ այ՞ քաղաքում իրանց գործերն էին կառավարում պ՝ պ. կապալառուները։ Կամ ինչ հարկաւորութիւն կա՞ գրելու՝ թէ այս կամ այն ուսուցիչը ինքնագլխութիւն է անում ուսումնարանի մէջ, թիկունք ունենալով իրան մի խումբ արքանեակների պաշտպանութիւն. կամ թէ մի ուսուցիչ սկզբից խօսք տուեց հոգաբարձութեան մի և նոյն ռոճիկով ծառայել, բայց երբ մօտեցաւ դասաւորութեան ժամանակամիջոցը, հրաժարվեց ծառայել մի և նոյն ռոճիկով, աւելի ստանալու դիտաւորութեամբ. իսկ հոգաբարձութիւնը աւելի լաւ համարեց աղատվել մի այդպիսի ուսուցչից, քան թէ ռոճիկը աւելացնել։ Այո, երբէք չէ հարկաւոր հարուածել ոչ մեր անխելական ուսուցիչների պակասութիւնները և ոչ էլ ուսումնարանների թերութիւնները,—թէև այս գրուածքները յառաջ բերէին մեր ուսումնարաններում մի «յայտնի, նպաստաւոր յեղափոխութիւն»։ Եթէ ներկայ կը լինէք մեր թատրոնական ներկայացումներին, անպատճառ գովեցէք, չը լինի թէ նկատէք պակասութիւններ, թէև շատ խոշոր....ապա թէ ոչ այստեղ էլ կը ճարէք մի քանի նեղսիրտ ոխերիմներ «նախանձի հերոսներից»։

Ենթադրենք թէ դուք մտադիր էք մեր հասարակութեան ժամանակակից ընտանեկան կեանքը պատկերացնել ընթերցողի առաջ, դուք խօսք չը պիտի դրէք թէ մեզանում չը կայ ընտանեկան կեանք այս բառի ընդհանուր ըմբռնմամբ, որ մեր ընտանեկան կազմակերպութիւնը հիմնված է բռնաւորական և ստրկական սկզբունքների վրա, որ այնտեղ թագաւորում է տան մեծի, տան բռնակալի խօսքը միայն, կատարվում է տան մեծի, տան բռնակալի հաճոյքը միայն։ Կամ թէ մեր դերդաստաններում չը կայ և հասկացողութիւն ինքնուրոյնութեան գաղափարի վրա, այլ բոլոր անդամները փոխադարձաբար ենթարկվում են մէկը միւսի ազդեցութեանը, մէկը միւսի կամքին։ Որ ընտանեկան դաստիարակութիւն ասելով, մեր ընտանիքներում հասկանում են՝ որդոց կերցնել, խմցնել, հագցնել մինչև նրանց մեծանալը, ոչինչ աւելի կամ պակաս անասնական ընազդումից։ Դուք խօսք չը պիտի դրէք թէ՝ մեր ընտանիքներում բռնաբարված է կնոջ ազատութիւնը, կաշկանդված է նրա գործունէութիւնը և ոտնակոխ է արված նրա իրաւունքները, որ կին ասելով մենք հասկանում ենք՝ մայրը երկայն, իսկ խելքը կարճ արարած. թէ նա ոչ այլ ինչ չէ, եթէ ոչ տղամարդի խաղալիքը, նրա հեշտասիրութեան առարկան և տնային բանտարկութեան դատապարտված զոհը միայն։ Այո, երբէք ներելի չէ գործ ածել մի այսպիսի անքաղաքավարի ոճ. պէտք է այսպէս գրել, թէ մեր ընտանեկան կեանքը դեռ ևս իր նահապետական մաքուր դրութեան մէջ է, թէ մեր կանացի սեռը այնքան ամօթխած է, որ հեռանում է միշտ անծանօթ տղամարդի ընկերակցութիւնից, որ նոքա այնպէս անտես են և աչխատասէր, որ ամիսներով տանից դուրս գալու միջոց չեն գտնում և այլն։

Չէ կարելի ասել թէ մեր քաղաքային գործոց ղեկավարները մի և նոյն վարկն ու համարումն ունեն մեզանում, որպէս ոստիկանութեան վերջին պաշտօնեան։ Որ նոքա ոչ այլ ինչ են, եթէ ոչ անպայման հրամանակատարներ այս կամ այն կամայականութեան.... այլ պէտք է ասել՝ կեցցեն մեր գլուխները, որ այսպիսի խոհեմ և հնազանդ վարմունքով զոհում են միշտ հասարակական շահերը զանազան կամայականութեանց դէմ, չենթարկելով իրանց անձը անխուսափելի գլխացաւութեանց։

Զգոյշ....զգոյշ կաց, մեր հասարակութեան վրա այսպիսի պակասութիւններ հնարելուց, ով յանդուգն և անսանձ թղթակից։ Մթթէ սա պակասութիւն է, որ մեր ամբողջ գաւառը այնպէս վարակված է հրէական արծաթասպաշտութեամբ, որ մի «մանրավաճառութեան զանգված» է փոխարկվել տեղն ու տեղը։ Քաղաքում կրկնապատկվել է կրպակների թիւը, թաղերում վխթում են հրէայ ճոթածախներ, իսկ գիւղական մանրավաճառներին թիւ ու համար չը կայ։ Էլ թիւրք, էլ հրէայ, էլ տեղացի,—բոլորը մանրավաճառներ են դարձել,—մէկ խօսքով մեր գաւառի հաւերն են մնացել միայն պարապելու ճոթածախսով։ Որ այսպէս բազմաճիւղանի դրութիւն ստանալով, հետզհետէ ընկնում է առուտուրը, որ նա հետզհետէ ստանում է «մուրացկանութեան» կերպարանք, և որ այս «արտակարգ» մանրավաճառութիւնը սպառնում է մնանկութիւն մեր վաճառականներից շատերին։

Հիմա մթթէ մեղաւոր են մեր վաճառականները, որ «միւտարի ճանկելու» համար իրար միս են ուտում, փողոցի մէջ իրար անպատվում և տասը տեղից կանչում ու յետոյ քաշքշում են «միւտարուն» միմեանց ձեռքից կորզելու համար, որ «քալքի մի բան կարողանային ծախել։» Իսկ միւս կողմից 100 ռուբլի եկամուտ բերող կրպակի քրէհը հասցնում են մինչև 400—500 ռուբլին ոչ թէ օգտվելու, այլ միմեանց վնասելու, միմեանց բերանից հացը խլելու նպատակաւ։ Սա խօսք պակասութիւն չէ, այս «ստորաքարշութեան սիստեման» անուանվում է մեզանում «վաճառականական ընդունակութիւն»։

Մթթէ սա պակասութիւն է, որ մեր կիսազարգացած մաղամները և մաղմուազելները երկրպագու են դարձել նորասիրութեան մօդայի, որ ռուսերէն թոթովելը «փառք ու պատիւ» են համարում իրանց համար, իսկ կեանքի բոլոր երջանկութիւնը և ապագայի բարօրութիւնը նախատեսնում են միայն էպոլետների...միայն չպօլերի... ընկերակցութեան մէջ։ Թէ նոքա այնպէս ընդունակ են դարձել անպատճառ օտարուհիներին նմանելու, որ կարճ ժամանակամիջոցում կարողացել են իւրացնել, կարծես ընտրովի, նրանց պակասութիւնները, չռայլութիւնները, ծուլութիւնները, թեթևամտութիւնները,—առանց նոցա յատկութիւնները սեփականեցնելու. օր. նոցա անտեսական կառավարութեան եղանակը, նոցա պաշտպանվելու բարոյականութիւնը, նոցա որդիքներին դաստիարակելու անհրաժեշտութեան հասկացողութիւնը, նոցա աչխատասիրութիւնը և այլն... Սա մթթէ պակասութիւն է։ Այս «անպատճառ օտարին նմանելու կապիկութիւնը» մենք անուանում ենք ցլուսաւորութիւն....» հա, հա, հա, հա, հա....

Ահա այն դրականական ուղղութիւնը, որին անպատճառ պիտի հետեի թղթակիցը մեզանում բեպուտացիա ճարելու համար։ Ահա այսպէս պիտի գրել կամ չը գրել մեր հասարակութեան բարոյական ախտերի ու պակասութիւնների մասին։ Իսկ աւելի և աւելի լաւ հաճոյանալու, մինչև անդամ մեր հասարակութեան մէջ դէպի ինքն մի համակրութիւն արծարծելու համար, զանազան ժողովածների և հրաւէրների մէջ, հարկաւոր է արտայայտել վառ ազգասիրական ցուցումներ.—ահ, Հայաստան... տարաբաղդ ազգ, հայրենիք, ահ, աւաղ... պարոններ...միութիւն, անձնազոհութիւն... և առհասարակ սրանց նման հայրենասիրական բացականչութիւններ... իսկ բացականչութիւններից յետոյ՝ մի քանի արտասուաց կաթիլներ.... Այո, արտասուաց կաթիլներ....

Եթէ ունես այս բազմակողմանի ընդունակութիւնները, կաց մեր քաղաքում, բաղդախնդիր օտարական,—դու այստեղ կը ճարես և զբաղմունք, և համարում, և գործ, և պաշտօն։ Եթէ ոչ,—հեռացիր շուտով, թէ չէ կը խեղդվես ընդունակութիւնների ու հանճարների մէջ։

Տեղացի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 10 Նոյեմբերի

«Кавказъ» լրագրի մէջ կարդալով արքեպիսկոպոս Սարգիս Ջալալեանցի կաակը, որ բարեհաճել է իր սեփական գումարը իր կենդանութեան միջոցում նուիրել ազգին, այդ գումարը 125 տարի մնալով բանկային հաստատութեանց մէջ դրամագլուխը մինչև 12 միլիոնի է հասնում, որ և խոհեմ կերպով բաժանում է ազգային հաստատութեանց. այսպէս նա մի գեղեցիկ օրինակ կամենում է թողնել իր յետագաներին։ Իմ մէջ ևս զարթելով ազգասիրութեան եռանդ, կամեցայ միանգամայն այդ օրինակին հետեել, բայց դժբաղդաբար ցաւ՝ի սիրտ պէտք է յայտնեմ, որ անիրաւ քսակս այնքան միջոց չէ խոստանում իմ սիրելի ազգին, այլ իմ ունեցածն է մի փոքրիկ չնչին գումար, այն է 52 ռուբլի, որ և ես նոյնպէս ցանկանում եմ այդ փոքրիկ լուման ձգել իմ ազգիս դանձանակը յիշեալ եպիսկոպոսի արած կտակի համաձայն. բայց որովհետև իմ դրամագլուխը մի չնչին գումար է, հարկաւոր է, սրա համար հոգս անել՝ որպէս զի այդ գումարը հասնի մի նշանաւոր դրամագլխի, գոնէ մինչև 10 միլիոնի. ուստի կը խնդրեմ ձեզանից՝ որ և դուք ազգի սրտացաւ բարեկամներից մինն էք, հրատարակէք ձեր լրագրի միջոցաւ այս իմ մտադրութիւնս, որ հաչուակալ մարդիկ հաչեն թէ այս իմ վերև յիշած 52 ռուբլի գումարը՝ արդեօք քանի՞ տարու ընթացքում կը հասնի 10 միլիոնի և ի սէր ազգի բարեհաճէք յայտնել ինձ, որպէս զի իմ մտադրեալ կտակս դուխ բերեմ յօգուտ հայ ազգիս։—

Մ. Ա. Պ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են ՂԱՐՍԻՑ. «Օրերումս ախալքալաքեցի պ. Ս. Յովհաննէսեանի մօտ ընթրիքի ժամանակ հիւրերից մէկը առաջարկում է տեղական ուսումնարանի օգտին նուիրատուութիւններ տալ։ Մի քանի րոպէում ստորագրութեամբ հաւաքում են 325 ռուբլի։ Այդ փողերը արդէն ներկայացրած են հոգաբարձութեանը։»

—

Նոյեմբերի 15-ին հայ դերասանական մշտական խումբը ԹԻՖԼԻՍԻ Ամարայնի թատրոնում ներկայացրեց «Դուստր նկարչի», դրամա 6 արարուածներով։ Նոյեմբերի 22-ին նոյն խումբը կը ներկայացնէ «Խաթաբալա», կոմեդիա հեղ. պ. Գ. Սունդուկեանի։ Պիեսան նոր մշակված է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՐՈՒՄԻՆԻԱ

—

Ռումինիայում այժմ օրական խնդիր է դարձած երկաթուղիների յետգնելու հարցը։ այս հարցը արդէն Բերլինի վեհաժողովից սկսած մինչև այժմ զբաղեցնում է Ռումինիայի պետական անձինքների կարծիքը։ Այժմ այդ հարցը ազգային ժողովում լրջամիտ և նուրբ հետազօտութեան առարկայ է դարձել։

Որովհետև ներկայ արտակարգ ժողովը պէտք է վեց օրից յետոյ ցրվէր, և որովհետև կառավարութիւնն անպատճառ ցանկանում է, որ այդ հարցն անպատճառ այս ժողովում վճռվի, ուստի կարծիք կայ, որ ներկայ արտակարգ ժողովի վերջանալու ժամանակը մի քանի օրով կը յետաձգվի։ Ինչպէս երևում է, երկաթուղիների ընկերութիւններից յետգնելու կնճռոտ հարցն էր, որ պ. Բրատիանօին այսքան դժուարութիւնների մէջ ձգեց. այս հարցի մէջ պ. Բրատիանօն մինչև անդամ իր սեփական կուսակցութեան կողմից էլ չը կարողացաւ արձագանք գտնել, որը Արաբ-Ցաբիայի յետստանալու համար կազմված մասնաժողովի օժանդակութեամբ վերջապէս ստիպեց նախագահ մինիստրին ներկայացնել իր հրաժարականը։

Ռումինիայում իսրայէլական հարցը մի նոր եռանդ է ստացել. այնքան վիճում, վիճաբանում, ասում, խօսում, հակաճառում են, և այս բոլորը մի դատարկ ամենատարրական հարցի մասին, թէ արդեօք մարդուն պէ՞տք է մարդկային իրաւունքներ տալ, թէ ոչ։ Ցանկալի էր իմանալ թէ ինչ են մտածում Եւրոպայի դիպլոմատները, որ այդքան մեծ դժուարութիւններ են հանում մարդկութեան հաւասար իրաւունքներ տալու, մի խեղճ, բայց ազնիւ, տոկուն և աշխատասէր ժողովրդի. նրանք խօ կատուներ, շներ, գայլեր չեն. չէ՞ որ նրանք էլ նոյնպէս մարդիկ են, ինչպէս և աշխարհի ճնացած բոլոր ժողովուրդը. չէ՞ որ նրանք էլ կոչված են մի և նոյն սուրբ պարտականութիւնների համար, որոնց համար և կոչված են աշխարհիս միւս բոլոր ազգերը։ Մենք խոր համոզված ենք, որ եթէ մի և նոյն հրէայ ցովսէվն իրան պաշտօնապէս ռուս, անգլիացի, գերմանացի կամ ֆրանսիացի անուանէր, նրա հետ կը հաշտվեն, և նրան այլ ևս չեն հալածի. սրանից հետևում է, որ իսկապէս հալածված է այդ ազգութեան անունը տիտղոսը։ Ի՞նչ ենք ուզում պատմութեան այդ նուիրական անունից, որին մենք այնքան երախտապարտ ենք, որովհետև ներողամտութեան, ազատութեան, եղբայրսիրութեան, հաւասարութեան, հաշտութեան կենդանարար սկզբունքները մենք այդ ազգից սովորեցինք։ Ո՞ւր է ներողամտութեան ոգին, որի արժանի ժառանգ ենք համարվում մենք։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի։ «Русскій Инвалидъ» լրագիրը հաղորդում է որ այսօր գինուորական նահանգական դատարանում նշանակված է ազնուական Լէօն Միրսկու, Օլգա Սէմէնսկու կնոջ, ազնուական Իպոլիտ Գօլովինի, հրաժարական տուած պաշտօնեայ Օլխինի, ազնուական Նիկոլայ Վերեշչագինի, մեշչանին Բէկլեմիշեվի, հրաժարական տուած պրապորշչիկ Իւրի Տարխովի և ժառանգական պատուաւոր քաղաքացի Լեվենսօնի գործը, որոնք բոլորն էլ մեղադրվում են նրանում, որ պատկանում են մի գաղտնի յանցաւոր ընկերութեան, որի նպատակն է, բռնի կերպով ոչնչացնել Ռուսաստանի այժմեան պետական կազմակերպութիւնը։ Բացի սրանից Միրսկի մեղադրվում է նրանում որ փորձ էր արել սպանել ժանդարմների գլխաւորին, պատրաստում էր կեղծ անցագրեր և զինված ընդդիմադրութիւն էր արել իշխանութեանը, կամենալով քանի մի անձինքներին սպանել։ Մնացածները մեղադրվում են Միրսկուն աջակցելու մէջ։ Իսկ Տարխով մեղադրվում է նրանում որ կեղծ անցագրեր էր պատրաստում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 Նոյեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Խարկովի գիներալ նահանգապետ կոմ Լորիս-Մելիքով անհրաժեշտ համարեց ենթարկել իր իշխանութեանը Զէրնիգովեան, Պոլտավայեան, Կուրսկեան, Օրլովեան և Վորոնէժեան նահանգները։

ՎԻԵՆՆԱ, 15 Նոյեմբերի։ Նոյեմբերի 13-ին այստեղ հասան Լոբանով—Ռոստովսկի իշխանը և գերմանական դեսպան Հայդֆելդ։ Լոբանով-Ռոստովսկի շուտով կուղևորվի դէպի Իտալիա։

Կ. ՊՕԼԻՍ, 14 Նոյեմբերի։ Մուխթար-փաշան հրաման է ստացել քսան բատալիոններով առաջ խաղալ դէպի Գուսինիէ և աձնել Գուսինիէ չէրնոգորցիներին, ուշք չը դարձնելով արնաուտների ընդդիմադրութեանը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ ГАЗЕТЫ

ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ

въ 1880 году.

Съ 1-го ноября будущаго 1880 года **„Тифлисскій Вѣстникъ“** будетъ издаваться **ЕЖЕДНЕВНО, не исключая** ни понедѣльниковъ, ни послѣпраздничныхъ дней, при участіи нынѣшняго состава Редакціи.

Вслѣдствіе увеличенія числа номеровъ газеты, подписная цѣна на газету нѣсколько измѣняется. Годовая подписка назначается: въ Тифлисѣ (съ доставкою на домъ)—12, съ пересылкою по Имперіи—13, съ пересылкою по почтовому союзу—18 руб.

СРОКИ.	Въ Тифлисѣ съ доставкой.		По Импери.		По почтовому союзу.	
	рубли.	коп.	рубли.	коп.	рубли.	коп.
На 12 мѣсяцевъ	12	—	13	—	18	—
„ 6 „	6	50	7	—	9	50
„ 4 мѣсяца	4	50	5	—	7	—
„ 3 „	4	—	4	50	5	50
„ 1 мѣсяцъ	1	50	2	—	2	50

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ, въ редакцію **„Тифлисскаго Вѣстника“.**

Въ Тифлисѣ подписка принимается, кромѣ конторы газеты (Эриванская площадь, д. № 3), въ газетномъ агентствѣ Шавердова.

Կենտրոնական Գրավաճառանոցում Դվորցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում վաճառվում են հետևեալ նոր գրքերը:

1. *Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած.* գ. — ր. 50 կ.
2. — *նոյնը առանց կազմի.* — » 30 կ.
3. *Թաւամազ մեղու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած.* — » 40 կ.
4. *Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ* — » 30 կ.
5. *Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ* — » 10 կ.
6. *Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար.* 1 — կ.
7. *Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց* 1 » 25 կ.
8. *Երկունք իններորդ դարու. գործ Ծերենցի.* 1 » — կ.
9. *Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Աստուրի.* — » 60 կ.
10. *Մի կաթիլ արտոսր, զոր կը հեղու Սիսակ հայ մխիթարին վրայ* — » 35 կ.
11. *Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատաստանութիւն Ս. Արծրունու.* — » 50 կ.
12. *Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի* 1 » — կ.
13. *Մարմնակազմական կամ անատոմիական բառարան Լատինէրէնից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի* 1 » — կ.
14. *Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդինեանի* 1 » — կ.
15. *Հայկական թատրոն. Վուչքի իմ վեչեր, ֆարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի* — » 40 կ.
16. *Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի* — » 25 կ.
17. *Աշնանային երեկոյ գիւղում, վոդեվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի* — » 25 կ.
18. *Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմշկեանի* — » 40 կ.
19. *Ժանս և Ժանէտ օպերա-վոդեվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ* — » 40 կ.
20. *Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի* — » 30 կ.
21. *Պառաւներին խրատ. վոդեվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի* — » 50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պեսոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցէով. „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

5—6

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей програмѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы, обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнымъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденціи; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная: театральныя и музыкальныя извѣстія; судебная хроника. Историческій листокъ; разныя извѣстія; биржевыя, желѣзно-дорожныя, торговыя и др. свѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

На годъ . . . . . 6 руб.
„ полгода . . . . . 4 „
„ 3 мѣсяца . . . . . 3 „
„ 1 мѣсяцъ . . . . . 1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты **„РУССКІЙ КУРЬЕРЪ,“** Столешниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. **Н. П. Ланина**, въ его конторѣ, и у всѣхъ извѣстнихъ книгопродавцевъ Москвы; въ С.—Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволятъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москварѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ Է *յայտարարութիւններ* ԲՈԼՈՐ *ռուս և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *համար խմբագրական* ԳՆԵՐՈՎ, *նշանաւոր զիջումներով:*

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՕՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ *ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրների համար: Թարգմանութիւնները* ՉՐԻ ԵՆ ԼԻՆՈՒՄ: *Իւրաքանչիւր յայտարարութեան համար* ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ № *է ուղարկվում:*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱՋՄՎՈՒՄ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ *ընդունվում է բոլոր լրագիրների համար:*

2—15 (4)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ՄԵԾԱԴԻՐ ԵՒ ՓՈՔՐԱԴԻՐ

ՕՐԱՑՈՅՑՔ

1880 Թ.

Հանդերձ չորս նոր հետաքրքրական պատկերներով

և

Ծաղիկ Ընտանեաց. տ. յաւելուածով: Որովհետև մենք արդէն բացեցինք Երևանում սեփական տպարան, ուստի մեր ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ *կը լինեն պատրաստ դեկտեմբերի մէջ:*

Գումարով գնողաց զիջումն կը լինի: Մեր տպարանում ընդունվում են չափաւոր գներով ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Մեր հասցէն՝ въ Эривань

А. Гуламирянцу. *Աբգար Գուլամիրեանց*

4—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *հրաւիրում է ցանկացողներին ընդունել 1) ժամանակաւոր առևտրական բնակարանների շինութիւնը Կախետինսկայա հրապարակի վրա, Հաւլաբար և Ռուսաց փողոցի վրա, 2) Սապէօրնայա և Մալայա Վօդվօզնայա փողոցների վրա գտնված քաղաքային տան շինութեան փոփոխելը և լրացնելը, ներկայ գտնվել աճրդախօսութեանը, որ լինելու է քաղաքային վարչութեան մէջ հինգշաբթի նոյեմբերի 15-ին առաւօտեան 12 ժամին: Աճուրդը կը լինի բերանացի և վերջնական առանց կրկնաճուրդի: Թոյլ է տրվում նոյնպէս ներկայացնել ծածկված յայտարարութիւններ: Աճուրդը կարող է լինել թէ երկու գործերի համար միասին և թէ իւրաքանչիւրը առանձին: Պայմանների և նախագծերի հետ կարելի է ծանօթանալ վարչութեան մէջ ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը, բացի տօներից:* 3—3

ԱՐՄԱՏԱՅԱԾ ԱՐԵՑՈՂՈՒԹԵԱՆ *և նրա սարսափելի հետևանքների առաջն առնելու համար* ՄԻՋՈՑՆԵՐ *է ցոյց տալիս և* ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ *է տալիս Կայսերական դեղագործ* ԳՇԻՀԱՅԻ (Gchihay) *Գրացայում, Շտիրիա նամակներ կարելի է գրել ռուսաց, գերմաներէն և ֆրանսիերէն լեզուներով: Պատասխանների համար պէտք է փոստային* ՄԱՐԿԱՆԵՐ *ուղարկել:*

2—3 (5)

ՓԱՍՏԱԲԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԼԱԴԻՍԼԱՎՕՎԻՉ ՄԱՐՑԻՆԿԵՎԻՉ *այժմ բնակվում է* ԱՅՎԱԶՕՎԻ *տանը Արմենակի բազար փողոցի վրա, Կատօլիչեսկայա փողոցի դիմացը, նոյն տանը, որտեղ* ԴԵՂԱՏՈՒՆՆ *է գտնվում:*

2—6 (5)

Մի երիտասարդ, որ երկար ժամանակէ ի վեր պարապել է պրատիկայով, կամենում է մասնաւոր ընտանիքներում կամ ուսումնարաններում կրկնութիւններ անել գիմնազիական բոլոր առարկաներից: Հասցէն հարցնել «Մրշակի» խմբագրատանը:

Дозволено Цензурою 16 Ноября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона